ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «14» 08 2026 թ. N 2448-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N 287-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2026 թվականի փետրվարի 9-ի «Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի 2026 թվականի միջոցառումները հաստատելու մասին» N287-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Հրամանի 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝
   «Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է ս.թ. մարտի 18-ից ծագած հարաբերությունների վրա:».
   2) Հրամանի N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

3) Հրամանի N3 հավելվածի 16-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«1) պետք է ունենա 3 տարվա աշխատանքային գործունեության և առնվազն 1 տարվա սեփական արտադրանքի արտահանման փորձառություն: Առանձին դեպքերում՝ հանձնաժողովն իրավասու է որպես խրախուսման միջոց թույլատրել արտահանման ներուժ ունեցող, սակայն արտահանում չիրականացրած ընկերությունների մասնակցությունը: Բացառություն է կազմում «Texworld Apparel Sourcing Paris 2026» գործվածքների և հագուստի մատակարարման միջազգային առևտրային ցուցահանդեսը», որին, ոլորտի առանձնահատկությունները և փոքրաթիվ տնտեսավարողների քանակը հաշվի առնելով, կարող են մասնակցել նորաստեղծ տնտեսավարողները, եթե փաստաթղթերով հիմնավորում են արտադրական գործունեության մեկնարկը, փաստացի պատրաստվածությունը, ներդրումային և միջազգային գործընկերային հիմքը, արտահանման ուղղվածությունը և ցուցահանդեսին մասնակցության տնտեսական նպատակահարմարությունը,»:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը ապահովել սույն հրամանի տեղադրումը Նախարարության պաշտոնական կայքում՝ ստորագրմանը հաջորդող օրը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2026 թվականի
_____ __ -ի N ___ -Լ հրամանի

«Հավելված N2

ՀՀ էկոնոմիկայի նախարարի

2026 թվականի

փետրվարի 9-ի N287-Լ հրամանի

ՑԱՆԿ

2026 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՂԱՎԱՐՈՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

1. «Gulfood 2026» սննդի և ըմպելիքի 30-րդ միջազգային ցուցահանդես- հունվարի 26-ից 30-ը (Դուբայ, Միացյալ Արաբական Էմիրություններ),
2. «Foodex Japan» սննդի և խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդես - 2026 թվականի մարտի 10-ից 13-ը (Տոկիո, Ճապոնիա),
3. «Texworld Apparel Sourcing Paris 2026» գործվածքների և հագուստի մատակարարման միջազգային առևտրային ցուցահանդես - օգոստոսի 31-ից սեպտեմբերի 2-ը (Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն),
4. «Fruit Attraction 2026» — 18-րդ միջազգային մրգերի և բանջարեղենի առևտրային ցուցահանդես – հոկտեմբերի 6-ից 8-ը (Մադրիդ, Իսպանիայի Թագավորություն),
5. «BCB Bar Convent Berlin 2026» գինու և ոգելից խմիչքների միջազգային ցուցահանդես- հոկտեմբերի 12-ից 14-ը (Բեռլին, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն),
6. «Sial Paris 2026» սննդի և խմիչքի միջազգային ցուցահանդես- հոկտեմբերի 17-ից 21-ը (Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն),
7. Չինաստանի 9-րդ միջազգային ներմուծման ցուցահանդես - նոյեմբերի 5-ից 10-ը (Շանհայ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն),
8. «Diflex Dubai International 2026» կոշիկի, պայուսակների, աքսեսուարների և կաշվե արտադրանքի միջազգային ցուցահանդես- դեկտեմբերի 8-ից 10-ը (Դուբայ, Միացյալ Արաբական Էմիրություններ):